

## ԿԱՐԾԻՔ

Ալբերտ Մարատի Զուրաբյանի «Անձի մասնագիտական անվտանգության հոգեբանական նախադրյալների ապահովումը SS կիրառման պայմաններում» թեմայով ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Արդի պայմաններում անվտանգության խնդիրը որակապես նոր միջավայրում է դիտարկվում, քանի որ մարդիկ չեն կարողանում հարմարվել SS ոլորտում ընթացող արագ փոփոխություններին:

Հոգեբանական անվտանգությունը մի կողմից ապահովում է մարդու կենսագործունեության որոշակի պայմաններ՝ մյուս կողմից անձի որոշակի հոգեբանական վիճակներ և բնութագրեր:

Ըստ այդմ, մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգությունը ներկայումս չափազանց արդիական է: Մասնագիտական գործունեությունը բնութագրվում է շարժունությամբ և անորոշությամբ, ինչը անձից պահանջում է անորոշ, որոշ դեպքերում նաև բարձր մակարդակի բանիմացություն, հարմարվողականություն և արտակարգ իրավիճակներում որոշումների կայացման հստակ կիրառման ունակություն:

Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել այն մասին, թե որ գործոններն են ազդում անձի հոգեբանական անվտանգության ձևավորման վրա, ինչ մեթոդներ և գործիքներ կարող են օգտագործվել աշխատանքային միջավայրում հոգեբանական անվտանգության ապահովման համար:

Հետազոտվող խնդրի գիտական մշակման նպատակով հայցորդի կողմից ուսումնասիրվել է հայրենական և արտասահմանյան բազմաձևավալ գրականություն:

Անվտանգության հոգեբանական բաղադրիչները ներկայացնող արտասահմանյան (Վ.Ն Կուզնեցով, Լ.Ա.Բանա, Օ.Յ. Զոտով, Ա.Ա. Ռեան, Ա.Վ. Զյոբին, Գ.Վ. Գրաչով, Ն.Գ.

Ռասոխ, Գ.Ս. Կորիտովա), ինչպես նաև հայրենական հեղինակների (Ռ. Վ. Աղզունցյան, Վ.Ռ. Պապոյան, Դ.Յ. Մարգարյան և այլոք) հայեցակարգերը մանրակրկիտ կերպով ուսումնասիրվել են աշխատանքի շրջանակներում:

Աշխատանքի գիտական նորույթն այն է, որ անձի հոգեբանական անվտանգությունը դիտվում է որպես մասնագիտական գործունեության արդյունավետությունը ապահովող գործառույթ և ուսումնասիրվում է անձնային, դրդապատճառային և հուզական ոլորտների համակցման տեսանկյունից:

Ատենախոսության վարկածը համապատասխանում է ներկայացվող պահանջներին, նպատակը ձևակերպված է հստակ:

Աշխատանքի տեսական նշանակությունը մասնագետների լայն շրջանի կողմից իրականացվող պրակտիկ գործունեության և մասնագետի հոգեկան առողջության վրա ազդող գործոնների վերլուծությունների ընդհանրացման մեջ է:

Գործնական նշանակության տեսանկյունից աշխատանքը հնարավորություն է տալիս իրականացված վերլուծությունը կիրառել գործունեության արդյունավետության բարձրացման, հոգեկան առողջության պահպանման , ինչպես նաև առանձին հատվածներ՝ աշխատանքային ֆորմալ միջավայրից դուրս գործունեություն ծավալող մասնագետների աշխատանքային գոտու արդյունավետ ձևավորման համար: Ներկայացված մոտեցումը օգտակար կլինի հոգեբանական առողջության գնահատման , բացասական գործոնների դուրսբերման, ճգնաժամային իրավիճակներում անվտանգ մոդել ստեղծելու նպատակով:

Կատարված է հետազոտական- փորձարարական ծավալուն աշխատանք, կիրառվել են համապատասխան մեթոդներ, առկա է վերլուծական-տրամաբանական փոխկապվածություն:

Եզրակացությունները համոզիչ են, դրանցում արտացոլված են ատենախոսության մեջ առաջ քաշված բոլոր դրույթների առաջադրված խնդիրների լուծումները, տեսական և հետազոտական բաժիններում կատարված հետազոտությունների հիմնավորումները:



Չնայած կատարված աշխատանքի բարձր որակին և գիտական նշանակալի արժանիքին՝ այնուամենայնիվ մեր կարծիքով ատենախոսության մեջ տեղ են գտել որոշ բացթողումներ և վրիպումներ, որոնց մասին նշվում է ստորև.

1. Արդիականությունը թեկուզ և հիմնավորված է, սակայն կարելի էր առավել կոնկրետ ներկայացնել.
2. Հետազոտության ընտրանքը կազմել են 20-75 տարիքի սահմաններում գտնվող անձինք, սակայն տարիքային խմբերի համեմատական հետազոտություն կարձեստ առկա չէ աշխատանքում.
3. Գրականության օտարալեզու - ցանկը չի համապատասխանում արդի չափանիշներին, քանի որ 1980-ական թվականների վաղեմության գրականությունը իրականության ինտենսիվ փոփոխության պայմաններում հանդիսանում է ժամանակավրեպ (հատկապես հաշվի առնելով թեմայի յուրահատկությունը).
4. Ցանկալի կլիներ հայցորդի կողմից մանրամասը շարադրվել, թե ինչ է հասկանում հետազոտության օբյեկտը հանդիսացող «հուզակա հյուծվածություն» ասելով և ինչպես է այն դրսևորվում տարբեր տարիքային խմբերի մեջ ներառված SS մասնագետների մոտ.
5. Առկա են տեխնիկական բացթողումներ, լեզվական առանձնահատկություններին բնորոշ խնդիրներ, մասնագիտական միավորները կարելի է փոխարինել հայերեն համարժեք հասկացություններով: Հաճախ են օգտագործվում օտարալեզու բառեր և բառակապակցություններ (Էջ 8, 17 և այլն):

Այս բոլորով հանդերձ՝ Ալբերտ Մարատի Զուրաբյանի «Անձի մասնագիտական անվտանգության հոգեբանական նախադրյալների ապահովումը SS կիրառման պայմաններում» թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն աշխատանք է: Այն իր բովանդակությամբ ու առաջադրված խնդիրների լուծման գիտականությամբ համապատասխանում է ՀՀ ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին

